

ՀՈՎԻՏԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ - 1985

1985-ի վերջաւորութեան լրացած կ'ըլլայ Գովուական աշխատանքիս իններորդ տարին: Աւելի ճիշտ այս քառօրյա Տարին կ'ըլլայ Ս.Աստուածածնայ ծովին Գետ իմ առնչութեանս: Այս տեղեկագիրը անցնող տարուան գործունէութեանս ամփոփումն է գոր խոնարհաբար կը ներկայացնեմ Տիրոջ եւ ձեզի:

1. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՈՒՄ

	1982	1983	1984	1985	ԳՈՒՄԱՐ
ա. Մկրտութիւն	11	7	7	13	38
Պսակ Ամուսնութեան	3	9	9	9	30
Թաղում	9	6	13	4	32
Նշանտուր	-	-	-	2	2

Ս. Պատարագի կանոնաւոր մատակարարումէն զատ տեղի ունեցան նաեւ մասնաւոր արարողութիւններ եւ պաշտամունք.- Ոտնլուայ՝ վերապրողներու մասնակցութեամբ Ապրիլ 23-ի Գիշերային Հսկում, ճորճթառն Համալսարանի մէջ, միջ-եկեղեցական պաշտամունք Ցեղասպանութեան նուիրուած եւ Ուաշինկթըն Գաթետրալի մէջ տեղի ունեցած 70-ամեակի նուիրուած արարողութիւնը:

ԱՅՑԵԼՈՒ ԵՆԵՂԵՑԱՆԱՆՆԵՐ Տարուան ընթացքին ունեցանք Գետեւալ Գիւր եկեղեցականները որոնք պատարագեցին եւ կամ քարոզեցին մեր հրաւերով.-

- Երեք Դպրեվանքի ուսանողներ Ս.Ներսէս Աստուածաբանական Դպրոցէն:
- Տ.Գէորգ Քինյ.Առաքելեան, Գալիֆորնիայէն:
- Տ.Վազգէն Վրդ. Թաղոյեան, Նիւ Եորքէն:
- Երկու վարդապետներ Միխիթարեան Վիեննայէն եւ Վենետիկէն:
- Եկեղեցական Գիւր մը Հայաստանէն:
- Առաջնորդ Սրբազան Հայրը Գովուական այցելութիւն տուաւ Դեկտ.8-ին եւ Փետրուարին ալ նախագահեց կառավարիչ Ճ.Տէօքմէճեանի պատուին տրուած ճաշկերոյթին եւ 70-ամեակի նուիրուած արարողութեանց: Այս առիթով ներկայ էին նաեւ Արեւմտեան եւ Գանատայի Թեմերուն Առաջնորդները եւ նախկին Առաջնորդ Տ. Սիոն Արք.Մանուկեան եւ այլ եկեղեցականներ:

բ. ԽՈՐՀՐԴԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ Այս մարզին մէջ կ'իյնան՝ Հիւանդանոցներու եւ հանգստեան տներու այցելութիւն, Գովուական խրատ եւ խորհրդատուութիւն՝ անձնական, ընտանեկան, գործի, բնակարանի, գաղթի եւ քաղաքացիական հարցերու կապակցութեամբ: Օգնութիւն, Հայ Պատմութիւնը եւ Մշակոյթը ուսումնասիրողներուն: Անձնական եւ կրթաթոշակի յանձնարարութիւններ, Դատարանի մէջ թարգմանութիւն եւ վկայութիւն, ընտանեկան վէճերու միջնորդութիւն եւ Դասախօսութիւն տեղական դպրոցի մէջ: Բացի Գովուական այցելութիւնէն եւ Տնօրինէքէ, վերոյիշեալ հարցերու կապակցութեամբ 100-է աւելի առիթներով զբաղեցայ:

4. ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Գրասենյակի ժամերն էին 10-2 որոնք ընթացքին մասնակի ժամերով քարտուղարուհիին օգնութիւնը ունեցանք: Կէսօրէ ետք եւ երեկոները եւս անձնապէս օգտագործեցի յաւելեալ աշխատանքներու համար:
2. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Շնորհալին եւ նոյն չափի պրակներ տպուեցան եւ ցրուեցան ՈԼԹ անգամ եւ ընդհանուր գումար 250 էջերէ աւելի պարունակութեամբ: Անոնց միջոցաւ ըրինք մեր տեղեկատուութիւնը եւ յայտնեցինք մեր շնորհակալութիւնը բոլոր նուիրատուներուն: Տպեցինք կրօնական, մշակութային եւ պատմական յօդուածներ: Աշնան, փոստով ցրուեցինք 15 հազարի մօտ յայտարարութիւն գորգի վաճառքի եւ Պագարի կապակցութեամբ: Տիր Արմինիըն Գաբիթըլ ժըրնըլ թերթին մէջ սկսած ենք գործածել լման էջ մը մասնաւոր պատգամով եւ գալիք ձեռնարկներու յայտարարութեամբ: Թերթին հրատարակիչ-խմբագիր Պրն. Ալպէրթ Գաբիկեանին կը մաղթենք յաջողութիւն:

Մեր ծխականներէն շատեր օգնեցին այս թերթիկները եւ յայտարարութիւնները կազմելու եւ փոստին պատրաստելու: Ասոնցմէ զատ բազմաթիւ թրուուցիկներ եւ նամակներ դրկուեցան ուղղակի կապ հաստատելու համար ծխականներու հետ: Մեր հրատարակութիւնները կը դրկուին աւելի քան 1150 հասցէի, իսկ Շնորհալին՝ 750 հասցէի:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ծխական աշխատանքներու առնչութեամբ շարունակեցի անհատներու եւ խումբերու հետ խորհրդակցութիւններս:

1. Ծխական Խորհուրդ իբրեւ Հովիւ-նախագահ, ներկայ եղայ եւ մասնակցեցայ ծխական Խորհուրդի որոշումներուն եւ աշխատանքներուն: Մասնաւոր շնորհակալութիւն ծխական Խորհուրդի անդամներուն եւ Ատենապետ Տիար Մ. Թաշճեանին որոնք նուիրումով կատարեցին իրենց պաշտօնը:
2. Օժանդակ Մարմիններ Շարունակեցի մօտէն գործակցիլ եկեղեցւոյ կազմակերպութեանց հետ, նախագահելով անոնց ընթացիկ եւ մասնաւոր ժողովներուն, բացի երբ անոնք տեղի ունեցան Կիրակի Պատարագէն վերջ:

Մասնաւոր շնորհակալութիւն՝ Տիկնանց Միութեան, Դպրաց Դասի, Կիրակնօրեայ եւ Հայ Դպրոցներու, Կրտսեր եւ Երէջ Երիտասարդաց, Արարան Աւագներու Ընկերակցութեան գործադիր վարչութեանց, Ատենապետներուն, Տնօրէններուն, Ուսուցիչներուն եւ բոլոր անխոնջ եւ հոգածու նուիրեալներուն:

8. ՊԱՏԻՄԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՒ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ

1. Հաւատքի Հարցերու Եւրջ Հարցազրոյց Շնորհակալութիւն Պրն. Տին Շահինեանին որ մինչեւ 1985-ի ամառը գործօն պահեց այս աշխատանքը: Որովհետեւ Կիրակի օրուան ժամապաշտութեան նոր ձեւը որդեգրեցինք, որոշուեցաւ այս ձեռնարկը դադրեցնել: Ժամանակացոյցի այս կերպը գնահատելէ ետք կը յուսամ որ հարցազրոյցը կը շարունակուի:
2. Մեր Երիտասարդները դարձեալ մասնակցեցան եւ օգտուեցան Ս. Ներսէսի ամառնային դաստիարակչական ձեռնարկէն: Երիտասարդաց մասնակցութիւնը քաջալերելու համար օգտուեցանք Յովհ. եւ Մարի Սիմոնեան եւ վալէնթին Պոսթոնեան-Սթոյլ ֆոնտերէն 251.75 եւ 87.44 տուար յաջողական յանկացումներով:
3. Առանձնագում Առաջինը տեղի ունեցաւ տեղւոյս վրայ 15 պատանի մասնակցողներով: Դասախօսներն էին Հ. Սրկ. Զիլիկիրեան, Տիկիներ՝ Գ. Գաբիկեան եւ Ա. Տէրտէրեան: Երկրորդը տեղի ունեցաւ Փէնսիլվանիոյ մէջ 25 մասնակիցներով եւ Տիկ. Լուսի Մուրատի կազմակերպութեամբ:

4. Դասախօսուծիւններ, Խորհրդածուծիւններ եւ Մեծ Պահոց հսկումներ տեղի ունեցան թէ պաշտամունքի եւ թէ հոգեւոր դաստիարակութեան համար: Հսկումի խորհրդածուծիւնները ըրին կատարինէ Տէրտէրեան, Ջաւէն եւ Պերճ Գալայմեան, Ռաբսէն Գրմազմեան եւ Ճէք Վարդապետեան: Մեծ Պահոց սիրակիներուն ունեցանք Տիկիւններ Գ. Գաբիկեան եւ Ա. Տէրտէրեան, Պրնյք. Ճ. Տէրտէրեան եւ Տին Շահինեան եւ Դոկտ. Զ. Գրմազմեան: Բոլորն ալ ներշնչող եւ դաստիարակիչ էին իրենց տուած պատգամով:

5. Բարեսիրական ֆոնտ Աւելորդ է ըսել որ պէտք է զգայուն ըլլալ եւ ընդառաջել եկեղեցւոյ այս շատ կարեւոր առաքելութեան: Տարուան ընթացքին փորձեցինք նպաստել եթովպիայի Սովահարներուն, Մերսիքոյի երկրաշարժի եւ Գոլումպիայի Աղէտեալներուն, Ուաշինկթընի Անպատսպարներուն եւ Հայ ընտանիքներու: Ամէն անգամ չէ որ հարիւր տոկոսով յաջողեցանք, բայց սկսած ենք այդ մասին աւելի զգայուն եւ հոգացող ըլլալ:

Այս առիթով շնորհակալութիւն կը յայտնեմ Վարդանանց Ասպետներու եւ Դուստրերու կազմակերպութեանց որոնք հովիւին միջոցաւ նիւթապէս օգնեցին հայ ընտանիքներու անհատապէս եւ հաւաքաբար: Նմանապէս թէնլի Ընկերակցութիւնը իր նպաստը բերաւ Պրն. Ռ. Ճանիկեանի միջոցաւ:

Դարցեալ եւ կրկին շնորհակալութիւն բոլոր ն:

Երախտագիտութեամբ կը նշեմ դարցեալ թէ մեր միւս Անանուն-Անճանօթ Բարերարը այս տարի եւս մեզի դրկած է Հազար Տոլարի նուէր մը Շինութեան ֆոնտին համար:

2. ՁԱՆԱԶԱՆՔ

1. Հոգեւոր Վերանորոգութիւն, Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ ատենապետ նշանակուած եմ Յանձնախումբի մը որ կը պատրաստէ ծրագիր մը Հոգեւոր Վերանորոգութեան ամբողջ թեմին համար: Ծրագիրը ներշնչուած է Բրոնէքթ Բիչ Աութ Ծրագրէն որ պատրաստուած էր մի քանի տարիներ առաջ Տէր եւ Տիկ. Ճորճ Տէրտէրեաններու կողմէ: Հոգեւոր եւ կազմակերպչական այս յայտագիրը կը յուսանք որ գործադրութեան կը դրուի 1986-ին: Եկեղեցական անդամներու կողքին Յանձնախումբի մաս կը կազմեն նաեւ Ճորճ եւ Աննա Տէրտէրեանները:

2. ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՅ ՈՒՄՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՅԱՅՏԱԳԻՐ. Այս ժողովին առաջարկն է որ թեմական Պատգամաւորական ժողովը վաւերացուց եւ երկարատեւ ծրագրումէ ետք պատրաստ է գործադրութեան: Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ այս Յանձնախումբին ալ Ատենապետ նշանակուած եմ: Իմ առաջարկովս, Յանձնախումբի անդամ նշանակուած են. - Տիկ. Գ. Գաբիկեան, Տէր եւ Տիկ. Ճորճ Տէրտէրեան, Գոլ. Ճ. Ճըսպալեան, Դոկտ. Զ. Գրմազմեան, Երէցկիւնը եւ Դոկտ. Ե. Օնանեան իբրեւ ներկայացուցիչ թեմական Խորհուրդի: Պրն. Տին Շահինեան ուզեց դուրս մնալ բայց մնաց խորհրդական: Յայտագրին առաջինը պիտի գործադրուի Փետր. 9-15:

Շնորհակալութիւն Յանձնախումբերու վերոյիշեալ անդամներուն եւ Տին Շահինեանին որ գործնապէս օգնելով պիտի ըլլայ նաեւ դասախօսներէն մին:

3. Ապրիլ 24. Քանի որ Առաջնորդարանէն շրջաբերական կար բաղաքիս մէջ կազմակերպուած 70 ամեակի գլխաւոր ձեռնարկը չխաչածեւել, մեր աշխատանքները եղան սեղմ եւ համեստ: Բայց ըստ պատշաճի մեր յարգանքի տուրքը տուինք:

ա. Փետրուարին ունեցանք մասնաւոր արարողութիւն մը Ուաշինկթըն Գաթէտրալի մէջ, ծաղկեպսակի գետեղումով եւ հոգեհանգիստով: Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց Արեւմտեան եւ Գանատայի թեմերու Առաջնորդներու ներկայութեամբ: Ներկայ էին հիւր եկեղեցականներ եւ նախկին Առաջնորդ Գերշ. Ս. Սիոն Արք. Մանուկեան: Մեր եկեղեցին կազմակերպեց օրուան յայտագիրը Դպրաց Դասի եւ Սարկաւազաց մասնակցութեամբ:

բ. Աւագ Հինգշաբթի Օրը Ռոնլուայի արարողութեան մասնակցեցան 1915-ի Ջարդէն վերապրողները: Օրուան լուրը սպուեցաւ Ուաշինկթըն Փոսթի մէջ, շնորհիւ Պրն.Յ.Կալլայեանի:

գ. Ապրիլ 24 -ի նախօրեակին Ս. Պատարագ եւ Հսկում ունեցանք: Կարելոր թիւով երիտասարդներ կարդացին. Գատուածներ 1915-20-ական թուականներու թերթերէն եւ ամսագիրներէն քաղուած լրատուութիւններէն:

դ. Յաջորդող կիրակի օրը Ս. Պատարագէն ետք Հոգեմանգիստ կատարեցինք նահատակաց հոգիներուն համար: Դպրոցներու աշակերտները ծաղիկներ զետեղեցին մասնաւորաբար պատրաստուած ծաղկեպսակին վրայ եւ Մատաղ բաժնուեցաւ ներկաներուն:

4. Ամառուան քիքնիքի առթիւ հիւրասիրեցինք հայ երիտասարդները որոնք Ուաշինկթըն կը գտնուէին իրենց ընտրած մասնագիտութեանց մէջ փորձառական աշխատանք կատարելու կառավարական եւ այլ հաստատութեանց գրասենեակներու մէջ:

5. Պուլթիմորի Գաղուէթ. Եօթներորդ տարին է որ Ս. ծննդեան Տօնին առթիւ Ս. Պատարագ մատուցինք մասնակցութեամբ մեր եկեղեցւոյ Դպրաց Դասին: Անձնապէս միշտ կապ կը պահեմ եւ տրամադրելի եմ իրենց հոգեւոր եւ այլ ընկերային ծառայութեանց:

6. Խորանի Հոգատարութիւն եւ Մաս. Խորանի համար, Տիկիներ Ռ. Ալեքանտր, Օ. Օկիւլեան, Ա. Գրմբրմեան, Օր. Ա. Գալուզեան, Օր. Ա. Մանիկեան եւ Տիկ. Ճ. Օսգոյեան-Տակըրթի տուին լաւագոյն խնամքը:

Շնորհակալութիւն նաեւ այն տիկիներուն որոնք անանուն կերպով եւ սիրով շինեցին եւ նուիրեցին Ս. Պատարագի Մասը: Բոլորին կը մաղթենք քաջաոռջ եւ երջանիկ տարի մը:

7. ՍԱՐԿԱՌԱԳԱՑ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Տիար Արշալիր Օգսոնկիւր-Յովհաննէսեան, Դոկտ. Հրաչ Սէմէրմեան, Տիար Վարդգէս Քէշիշեան եւ Տիար Ենովք Պաշալեան Դեկտ. 8-ին Աւագ Սարկաւագ ձեռնադրուեցան Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ: Հպարտութեամբ եւ ուրախութեամբ պէտք է նշենք որ մեր եկեղեցիին համար պատմական օր էր Սարկաւագութեան կոչել արժանաւոր այս անհատները եկեղեցւոյս ծառայութեան համար: Կը շնորհաւորենք զիրենք եւ կ'աղօթենք որ իր շնորհքներովը հարստացնէ եւ օրհնէ զիրենք:

8. 25-րորդ Տարեդարձ. Այս առիթով դարձեալ շնորհակալութիւն կը յայտնեմ քահանայական ձեռնադրութեանս 25-ամեակի ճաշկերոյթ-հանդիսութեան համար: Երէցկիներ, զաւակներս եւ ես երախտապարտ ենք այն սիրոյն եւ գուրգուրանքին որ մօտ 250 բարեկամներ եւ ծխականներ ներկայ ըլլալով եւ շատ ուրիշներ նամակով եւ հեռագիրով յայտնեցին: Այս առիթով շնորհակալութիւն նաեւ նիւթական նուէրներուն համար որոնց ընդհանուր գումարը 2.500 Տոլար եղաւ: Ինչպէս յայտնած էինք՝ երէցկիներ եւ ես որոշեցինք զայն հաստատել իբրեւ հիմնադրամ մը որուն արդիւնքը ամէն տարի յատկացուի մեր Ծուխի պատանիներուն որոնք կը մասնակցին Ս. ներսէս Աստուածաբանական վրժոյնի ամառնային դասընթացքներուն:

9. ՄԱՍՆԱԽՈՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Անոնք որոնց մասնաւորաբար պարտական եմ իբրեւ անհատ եւ իբրեւ  
հովիւ բազմաթիւ են բայց կը յուսամ կը ներէք եթէ յիշեմ անոնցմէ  
ոմանք: Ուրեմն՝ մասնաւոր շնորհակալութիւն.-

- Պրն. Ճորճ Տէրտէրեանին չը իբր խորհրդատու եւ եկեղեցւոյ առաքե-  
լութեան եւ բարեսիրական գործունէութեան նուիրուած անձ մը օգտա-  
կար եղաւ ինձի անձնապէս եւ իբրեւ հովիւ:

- Տիկ. Աննա Տէրտէրեանին որ իր ամուսնոյն մտահոգութիւնները բաժ-  
նելով մէկտեղ իբրեւ Տեսուչ Կիրակնօրեայ Վրժրն. ի, լաւագոյնը ը-  
րաւ խղճամիտ մտահոգութեամբ:

- Տիկ. Ժանէթ Թորոխանեանին զոր կ'ուզեմ անուանել ՝՝ Տարուան Կա-  
մաւորը՝՝ իր սիրով տարած եւ յարատեւ աշխատանքին համար: Վստահ  
եմ որ դուք ալ ինձի հետ համաձայն էք: Իր հետ ունեցաւ իր ամու-  
սինը Լեւոնը եւ Պրն. Պերճ Բուքէյեանը որոնց հետ իրագործեց խո-  
հանոցի վերաշինութիւնը: Այս բոլորին համար արժանի են մեր երախ-  
տագիտութեան:

- Պրն. Ժիրայր Հէքիմեանին որ համբերութեամբ եւ ժպիտով շարունա-  
կեց ծառայել իբրեւ Հայ Դպրոցի Տեսուչ:

- Տիկ. Թագուհի Աւետիքեանին որ շարունակաբար մտահոգուեցաւ եւ  
յուշեց, ահագանգեց կարեւոր մանրամասնութիւններու մասին որոնք  
ընդհանրապէս մեր ուշադրութենէն կը վրիպին:

- Տիկ. Արուսեակ Գրմզրմեանին որ կը շարունակէ կազմակերպչական  
հոգը տանիլ Արարատ Աւագներու Ընկերակցութեան, իրեն հետ ունենա-  
լով Տիկիներն է. Գէորգեանը, Թ. Աւետիքեանը, Ա. Կէրիկեանը եւ Երէցկիներ:

- Տիար Մկրտիչ Թաշմեանին որուն շրջանը ծխական խորհուրդի մէջ  
կ'աւարտի ծառայած ըլլալով երեք շարունակական շրջան որմէ 3-ը  
իբրեւ Ատենապետ: Իր մեղմ բնաւորութիւնը եւ հաստատ համբերութիւ-  
նը կարեւոր արժանիքներ էին ծխական խորհուրդի համար:

- Տիկ. Լուսի Մուրատին, Օր. Ալէնուշ եւ Պրն. Վարուժան Վարուժանեանին  
որոնք իբրեւ խորհրդատուներ օգնեցին կրտսեր երիտասարդաց գործու-  
նէութեան իրենց հետ ունենալով նաեւ երէցկիներն օգնութիւնը:

- Պրն. Գեղամ Գրմզրմեանին եւ Պրն. Մայքըլ Սահակեանին որոնք Աւագ  
երիտասարդաց խումբը ի միասին պահեցին եւ՝ որոշ չափով գործունեայ:

- Պրն. Մկրտիչ Թաշմեանին եւ Պրն. Ռաֆֆի Սահակեանին որոնք նոյնպէս  
Հայ Գլապը ի միասին պահեցին եւ՝ որոշ չափով գործունեայ:

- Տիար Կարապետ Աւետիքեանին որ իր Տիկնոջ Թագուհի Աւետիքեանի  
օգնութեամբ իբրեւ քարտուղար, կառավարեց Գրատունը: Մասնաւոր հը-  
պարտութեամբ կը նշենք որ Գրատունը հայթայթողն է մշակութային,  
պատմական եւ կրօնական գրքերու, անոնց որոնք կը փափաքին իրենց  
տուներուն մէջ իրենց մտենադարանը ունենալ: Շնորհակալութիւն  
իրենց, Գրատունը միշտ բաց պահելնուն համար:

- Դպրաց եւ Սարկաւազաց Դասին՝ անհատապէս եւ հաւաքաբար, կը յայտ-  
նեմ իմ խորունկ երախտագիտութիւնս իրենց կանոնաւոր ներկայութեան  
եւ արարողութեանց մասնակցութեան համար: Շատ առիթներով՝ սիրով եւ  
հաւատքով, անոնք ծառայեցին իրենց պարտականութեան սովորական սահ-  
մանէն անդին: Արժանի են մեր հաւաքական երախտագիտութեան:

- Տիրութեամբ եւ մեծ նորուստի զգացումով կը յիշեմ Պրն. Արմենակ Պո-  
յանեանը, մեր հանգուցեալ Դպրապետը որ մահացաւ Օգոստ. 18-ին Ս. Աստ-  
լաձաձնայ. Տօնին օրը: Իր յիշատակը՝ իբրեւ նուիրեալ եւ սիրող հայր  
եւ նոյնքան սիրող եւ նուիրեալ՝ իր եկեղեցիին եւ իր ժողովուրդին, մեր  
սրտերուն մէջ պիտի մնայ միշտ:

Յիշենք նաեւ մեր նուիրեալ ծխականներէն Զեփիւռ Խաչիկեանը զորս կոր-  
սրնցուցինք անցեալ տարի:


Տէրը վարձատրէ զիրենք իր յաւիտենական խաղաղութեանը մէջ:

- Եւ վերջապէս շնորհակալութիւն երէցկիսին որ ոչ միայն համբերատար  
եւ յարատեւ սիրով մեղմացուց յամախակի երեկոյեան բացակայութիւնս  
տունէն, այլ եւ պատրաստակամօրէն օգնութեան հասաւ ուր եւ երբոր իրեն  
պէտք ունեցանք:

- Նոր տարիին հետ, տեսանելի իրազործումներու համար հպարտ ենք եւ զո-  
հութիւն կու տանք Աստուծոյ եւ երախտագէտ ենք բոլոր մասնակից ծխական  
ներուն: Անոնց կողքին մեր դիմաց կը գտնենք նոր նուաճումներու աս-  
պարէզ: Կան տակաւին բարձրագոյն զազաթներ՝ հոգեւոր հասունութեան եւ  
ընկերային-բարեսիրական մտահոգութեանց, զորս պէտք է նուաճենք:

Աստուծոյ օրհնութեամբ եւ ձեր գործակցութեամբ մենք յոյս ունինք որ  
մեր աշխատանքները յաջողութեամբ պիտի պսակուին:

Աղօթարար



Տ. Վրթանէս Աւագ Բնյ. Գալայձեան

Հոգեւոր Հովիւ